Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-319-

ՊԱՅՔԱՐ
ՅԵՐԵՔ ՀԱԶԱՐԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԿՈՄԲՆԱՇԻՆԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 1932

22 NOV 2017
—319—
1/3

Պետհրատի տպարան
Հրատարակ. № 2076
Գլավլիտ 7612(բ)
Պատվեր 1685
Տիրաժ 1500

ՄԱՐՏԱԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՆՇԱՆԱԲԱՆՈՎ

«ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԸ ՊԵՏՔ Ե ՎԵՐԱԾԻ ՎՈՂՋ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԸ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍԱՅԻՆ ԲԱՄԲԱԿԻ ՅԵՎ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԾ ՄԻ ՅԵՐԿԻՐ»։ (Ա. ԽԱՆՋՅԱՆ)

Դեռ 1921 թ. ընկեր Լենինը Անդրկովկասի բոլշևիկներին գրած իր նամակում վողջ կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը կենտրոնացնելով Անդրկովկասի էլեկտրիֆիկացիայի ու վոռոգման աշխատանքների վրա, ընդգծեց, վոր վոռոգումը «կվերստեղծի յերկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրացնի անցումը դեպի սոցիալիզմ»։

Նույն խնդրի վրա կանգ առնելով Համ.Կոմ(բ) Կուսի Կենտկոմը 1931 թ. հոկտեմբերի 31-ի իր պատմական վորոշման (Անդրկովկասի կուս. կազմակերպությունների աշխատանքների վերաբերյալ) մեջ նշում է, վոր «Կենտրոնական խնդիրը, վորից կախված է Անդրկովկասի գյուղատնտեսական տեխնիկական վերակառուցման հաջողությունը, ջրային տնտեսության վճռական վերակառուցումն է, տնտեսության, վորը դարձել է նեղ տեղ գյուղատնտեսության վերելքի գործում»։

Կյանքում կենսագործելով Լենինի կարևորագույն պատգամներից մեկը, Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ անջրդի հողերի վոռոգման ու ջրային շինարարության գործում ձեռք է բերել խոշոր նվաճումներ, ինչպիսիք են Շիր-ջրանցքը, Այգր-լճի ոգտագործումը, Կարճեվանի ջրանցքը, Փոքր-Սարդարաբադի ջրանցքը և այլն։

Խորհրդային Հայաստանի վոռոգման համար այսօր խոշոր տնտեսական և քաղաքական նշանակություն ունեցող մի գործ է հանդիսանում նաև Ղուերի վոռոգման աշխատանքները։

Ըստ նախնական պլանի, այս տարի, Ղուերի վոռոգման շինարարության պլանը կատարելով, մենք մեր յերկիրը պետք է հարստացնենք 10,000 հեկտար նոր պիտանի հողով, վորը դարերի ընթացքում մնացել է անոգտագործելի, և այդ 10,000 հեկտարը գլխավորապես ոգտագործվելու յե կուլտուրական (բամբակ, այգի, ծխախոտ) բույսերի հա-

մար։ Սակայն անցյալ տարվա կատարված աշխատանքներից պարզվեց, վոր առկա տեխնիկական հնարավորություններով սահմանված ժամկետին անհնար է 10,000 հեկտարի վոռոգման շինարարության պլանը կատարել, վորի պատճառով 10,000-ի պլանը այս տարի իջեցվեց 3000-ի։

Վերջին շրջանում շինարարության տեմպերի թուլացումը վորոշ կասկածներ առաջ բերեց պլանների կատարման վերաբերյալ։

Յելնելով դրանից, Հայկոմկուսի Կենտկոմի բյուրոն ապրիլի 29-ին քննության առնելով Ղռերի շինարարության խնդիրը, ընդունեց մի շարք մարտական վորոշումներ, վորոնց տվյալ կենսագործումով հնարավոր է հաղթահարել դժվարությունները, կատարել վոռոգման շինարարության պլաններն ու 3000 հեկտարը մինչև հուլիսի 20-ը ապահովել ջրով։

Մարտական շտաբի այդ վորոշումը մեր վողջ կուսակցական, խորհրդային, պրոֆեսիոնալ ու կոոպերատիվ կազմակերպությունների ուշադրությունը բևեռեց այդ խնդրի շուրջը և խոշոր խանդավառություն առաջացրեց բանվորական լայն մասսաների մեջ, վորոնք հերոսաբար լծված եյին Ղռերի շինարարության պլանների կատարման գործին։

Ինչպես Կենտրոնական Կոմիտեյի, այնպես ել մեր կուս., պրոֆմիութենական մյուս վերադաս որգանների վորոշումների մասսայականացումը պահանջեց մի փոքրիկ բրոշյուրով հրատարակել այդ վորոշումները, և այդ դարձնել յուրաքանչյուր բանվորի, ճարտարապետի ու տեխնիկի սեփականություն։

Սակայն մեր կուսակցական, կոմյերիտական ընկերները, հարվածային կառուցողներն ու ճարտարապետ տեխնիկները չպետք է միայն սահմանափակվեն այս վորոշումների մասսայականացումով, նրանք բացի մասսայականացումից պետք է նաև վճռականորեն պայքարեն կյանքում կենսագործելու մարտական այս վորոշումները։

Յուրաքանչյուր կառուցողի, ճարտարապետի, տեխնիկի համար պետք է պարզ լինի, վոր յեթե մենք չկարողանանք մինչև հուլիսի 20-ը ապահովել 3000 հեկտարը ջրով, այդ նշանակում է, վոր մենք մեկ տարի ևս անոգտագործելի մնացած վիճակում պետք է թողնենք այն 9–10 միլիոն ռուբլին, վոր մինչև այսոր ներդրել ենք Ղռերի վոռոգման շինարարության վրա։

Անշուշտ կուս. և պրոֆեսիոնալ վերադաս որգանների վորոշումների լրիվ կենսագործումը պահանջում է շինարարության պլանների լրիվ կատարում, պահանջում է պայքարել ամեն գույնի ոպորտունիստական տրամադրությունների դեմ, վորոնք մի շարք «օբյեկտիվ» պատճառներով, («շինանյութ չկա, բանուժով ապահոված չենք» և այլն) փորձում են ձգձգել ժամկետը։

Տեղի կազմակերպությունների խնդիրն է լինելու նոր խանդավառություն, սոցմրցման ու հարվածայնության նոր ալիք առաջ բերել վողջ բանվորության մեջ և մարտի հանել նրանց՝ 3000 հեկտարին ջուր հասցնելու համար, վորովհետև այդ պլանի ժամանակին կատարումից է կախված մեր վոռոգման հետագա ու հատկապես յերկրորդ հնգամյակի հսկայական աշխատանքների հաջողությունը։

ԱԶԳԱՅԻՆ ... ՀԱՄԱՐ
II-26558 գր

Աշխատանքներ, վորոնց կատարումով մենք պետք է ծաղկեցնենք դարերի ընթացքում ամայի մնացած Ղռերը։

ՂՌԵՐԻ ՋՐԱՆՑՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

ՀԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀԿ(բ)Կ Կենտկոմը մատնանշում է, վոր Ղռերի ջրանցքի կառուցման տեմպը դեռևս վտանգ է սպառնում, վոր առանց վոռոգման կմնան Ղամարլվի շրջանի 3000 հեկտար բամբակի արտերը։

Կենտկոմը գտնում է, վոր կառուցումը ժամանակին ավարտելու և բամբակի ցանքերը վոռոգելու համար ջուր թողնելու բոլոր անհրաժեշտ պայմանները կան։ Մատնանշելով մի շարք թերություններ և անկանոնություններ Հայջրտնտեսության և Ղռերի ջրանցքի շինարարության վարչության աշխատանքում (դիմազրկություն դյուկերի կառուցման մեջ, քարային աշխատանքները չծավալելը և այլն), ինչպես և շինարարության կուսբջիջների ու պրոֆ. որգանների թույլ աշխատանքը, Կենտկոմն առաջարկում է վերացնել այդ անկարգությունները, բոլշևիկյան հակահարված տալ թերահավատության այն տրամադրություններին, թե ջրանցքի կառուցումը հնարավոր չե ավարտել սահմանված ժամկետին և մոբիլիզացիայի յենթարկելով բոլոր ուժերն ու միջոցները, բարձրացնել աշխատանքի տեմպը, վորպեսզի հնարավոր լինի ամենաուշը մինչև հունիսի 20-ը ջուր թողնել ջրանցքով։

Կենտկոմը վորոշում է.—

1. Ղռերի ջրանցքի կառուցման բոլոր աշխատանքներն ավարտելու համար վերջնական ժամկետը սահմանել 1932 թ. ապրիլի 20-ը։

2. Պարտավորեցնել Ղռերի ջրանցքի վարչությանը, կուսակցական և արհմիութենական կազմակերպություններին՝ յերկու որվա մեջ վճռական բեկում ստեղծել շինարարության ու աշխատանքի կազմակերպման մեջ և զարգացնել այնպիսի տեմպ, վոր ապահովվի կառուցման ավարտումը մինչև 1932 թ. հունիսի 20-ը։

3. Պարտավորեցնել ՀԿ(բ)Կ-ի Յերևանի կոմիտեյին և ՀԼԿՅԵՄ-ի Յերևանի կոմիտեյին՝ 3 որում մոբիլիզացիայի յենթարկել կուսակցության 50 անդամ և 100 կոմյերիտական՝ շինարարության մեջ աշխատելու և նրա բանվորների մեջ կատարվող կուսակցական մասսայական աշխատանքն ուժեղացնելու համար։

4. Ղռերի ջրանցքի կառուցումը համարել դերհարվածային։ Պարտավորեցնել կուսակցական, խորհրդային և հասարակական բոլոր կազմակերպություններին՝ իրական ոժանդակություն ցույց տալ Կենտկոմի ու Ժողկոմխորհի հատուկ լիազորին և Ղռերի ջրանցքի կառուցման վարչությանը։

5. Հայջրմոնտաժության պետ ընկ. Այվազյանին յերկու ամսով ազատել բոլոր աշխատանքներից և հանձնել նրան Ջրանցքի կառուցման անմիջական ղեկավարությունը, անձնական պատասխանատվություն դնել նրա վրա՝ աշխատանքի կազմակերպման, ժամկետների ու վորակի բնագավառում:

6. Ղռերի շինարարության պետ ընկ. Մելիքջանյանին յերկու ամսով ազատել բոլոր աշխատանքներից և անձնական պատասխանատվություն դնել նրա վրա՝ № 1 դյուկերի կառուցումը սահմանված ժամկետին ավարտելու համար:

7. Պարտավորեցնել Ժողկոմխորհի նախագահի տեղակալ ընկ. Յերզնկյանին՝ ճարել 21 վագոն շինափայտ և 3 օրում փոխարինաբար հանձնել շինարարությանը:

8. Պարտավորեցնել Աշխժողկոմատին և Հայջրմոնտաժությանը՝ 3 օրում մոբիլիզացիայի յենթարկել 30 քարտաշ և 5 օրում հավաքագրել 800 սևագործ բանվոր Ղռերի համար:

9. Մատժողկոմ՝ ընկ. Լ. Ղազարյանի վրա անձնական պատասխանատվություն դնել № 1 ցուցակի նորմաներով ժամանակին համապատասխան սննդամթերքի ֆոնդեր բաց թողնելու համար:

10. Պարտավորեցնել Հայկոոպի Վարչության նախագահ ընկ. Պողոս Մկրտչյանին, անձնական պատասխանատվություն դնելով նրա վրա 3 օրում վճռական բեկում ստեղծել Ղռերի բանվորների ապրանքավորման և սննդի բարելավման ասպարեզում:

11. Ջրանցքը նշանակված ժամկետին ավարտելու համար Կենտկոմի և Ժողկոմխորհի հատուկ լիազոր նշանակել Ժողկոմխորհի նախագահի տեղակալ ընկ. Կուբանլին, վերապահելով նրան արտակարգ լիազորություններ շինարարության ասպարեզում:

Խստիվ պարտավորեցնել բոլոր հիմնարկներին և կազմակերպություններին՝ ամենաուշը 2 ժամում կատարել ըստ էության հատուկ լիազորի բոլոր կարգադրությունները:

12. Կենտկոմում 10 որը մի անգամ զեկուցումներ լսել շինարարության ընթացքի մասին:

ՅԵՐԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԱՐՏԻ 9-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ ՂՌԵՐԻ 3-ՐԴ ԴԻՍՏԱՆՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Յերկոմի բյուրոն նշում է, վոր Ղռերի 3-րդ դիստանցիայում շինարարության գծով աչքի յեն ընկնում վորոշ նվաճումներ, ամենօրյա պլանները հասցվում են մինչև առանձին բրիգադ և բանվոր, իսկ կատարած աշխատանքի կանոնավոր հաշվառման հետևանքով իր ժամանակին պլանների դեկադային կատարողականը հասցվում է բանվորներին:

Տեղամասերն ապահովված են նախագծերով, կատարված է բանվորի հավաքագրման պլանը, զգալի աշխատանք է կատարված դիմազրկության և աշխատավարձի «ձախ» հավասարեցման վերացման ուղղությամբ. ամեն մի բրիգադյան ամրացվում է վորոշ աշխատանքի. մտցված է հասարակ և պրոգրեսիվ գործարքային աշխատանք, սևագործ բանվորներից պատրաստվել են միջին վորակյալ կադրեր (տասնապետներ, մեքենավարներ), լրիվ կատարված է ավազի պատրաստման պլանը և այլն:

2. Չնայած դրան, Ղռերի 3-րդ դիստանցիայի պլանները հունվար և փետրվար ամիսներում թերակատարվել են:

3. Յերկոմի բյուրոն նշում է, վոր պլանների թերակատարման հիմնական պատճառներն են՝

ա) Հավաքագրված բանվորներին ընդգրկելու ուղղությամբ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանք չտանելու հետևանքով բանվորական ուժի անռացիոնալ օգտագործումը, վորի պատճառով աշխատանքի արտադրողականությունը դեռևս՝ անհրաժեշտ բարձրության չի հասել:

բ) Աշխատանքի հերթականությունը բաշխվում է անռացիոնալ կերպով.

գ) 3-րդ դիստանցիան ապահովված չի անհրաժեշտ ինժեներ-տեխնիկական և հաշվային պերսոնալով:

դ) 3-րդ դիստանցիայի շինարարությունը դեռևս բավարար չափով մեխանիզացիայի չի յենթարկված, իսկ էքսկավատորի օգտագործումը անբավարար է (էքսկավատորի վորակը ցածր է):

յե) Բացի էքսկավատորից, դիստանցիայի մյուս ցեխերը, օբյեկտները և բրիգադները չեն անցել իրական տնտհաշվարկի:

զ) Խճի պատրաստման պլանը թերակատարվել է, վորը անդրադարձել է մյուս օբյեկտների պլանների վրա:

է) Կոնսերվի, «Արարատ» գործարանի, 2-րդ Յերգևսի, Ջինմասերի, ԽՃ. վարչության, Զորադյուղի բնակիչների և Նորագավթի առվի կողմից հարուցված արգելքները:

ը) Շինանյութերի և գործիքների մատակարարման պլանների թերակատարումը:

4. Յերկոմի բյուրոն մատնանշում է, վոր Ղռերի 3-րդ դիստանցիայի կուս., պրոֆ, ԼԿՅԵՄ կազմակերպությունները և վարչությունը բանվորների մեջ տարվող կուս. մասսայական աշխատանքը թողել են ինքնահոսի, վորի հետևանքով բանվորների մեջ զգալի չափով տարածված են թղթախաղը, հարբեցողությունը, հայհոյանքը, իսկ շինարարության մեջ սողոսկած հակահեղափոխական դաշնակ-կուլակային տարրերը հնարավորություն են ստացել բանվորների հետամնաց շերտերում իրենց հակահեղափոխական աշխատանքը ծավալ-

լել (հակահեղափոխական հոդվածներ պատի լրագրին տալը և այլն)։

5. Ձնայած կուլտուրական ուժերի գոյությանը, բանվորների մեջ կուլտ կրթական աշխատանքները չափազանց թույլ են տարված։ Գրքույկները փակված են. շինարարության վրա ստացվող 400 օրինակից ավելի դանազան թերթերը իրենց նպատակին չեն ծառայում, (գործածվում են իբրև ծխախոտի թուղթ և կոշիկի մեջ են դրվում)։

Պատի թերթն իր կոչման բարձրության վրա չի դրված։ Ռադիոբարձրախոսներ չկան բարակներում։

6. Կոմունիստները ու կոմյերիտականները գիշերները բարակներում վոչ մի քաղաքական մասսայական աշխատանք չեն տանում. ընդհակառակն նրանցից մի քանիսը անպատիժ կերպով մասնակցում են թղթախաղին, հարբեցողությամբ են զբաղվում և այլն։

7. Անմխիթար է սանիտարական դրությունը բարակներում և ճաշարանում։

8. Վոչ մի պայքար չի տարվում բանվորների մեջ նկատվող պոկրոդական տրամադրությունների և աշխանդիսցիպլինարության դեմ։

9. Ղուերի բանկոոպի վարչությունն անհրաժեշտ ուշադրություն չի դարձնում ճաշի և հացի վորակի և ճաշարանի սանիտարական դրության վրա։

10. Ղուերի 3-րդ դիստանցիայի կազմակերպությունները ընդգրկելով միայն աշխատանքի տեխնիկական կողմը, անուշադրության են մատնել թե ինչպես են կատարվել շինարարության պլանները, ինչպես են պայքարել դասակարգային թշնամին և նրա գործակալները՝ պլանների կատարումը ձախողելու համար և ընդհանրապես քաղաքական ինչպիսի պայմաններում է ձեռք բերվել յուրաքանչյուր խորանարդ մետր հողային աշխատանք։

3-րդ դիստանցիայի պլանների կատարումը նշանակված ժամկետին՝ 1932 թվի հունիսի մեկին ավարտելու համար, Ցերկոմի բյուրոն վորոշում է՝

1. Առաջարկել Բաղխորհրդի կոմֆրակցիային՝ տաս որվա ընթացքում տեղափոխել բոլոր այն քաղաքացիներին, վորոնց բնակարանները շինարարության պատճառով քանդվելու ենթակա յեն։

3-րդ դիստանցիայի պլանների կատարումը նշանակված ժամկետներին և Խճուղային վարչությանը Ղուերի վարչության հետ համաձայնության գալ և վոչ մի արգելք չհանդիսանալ Ղուերի շինարարությանը։

3. Խնդրել Կենտկոմին՝ հատուկ քննության առնել Ղուերի շինարարությանը արվող շինանյութերի և գործիքների մատակարարման հարցը և պարտավորեցնել համապատասխան օրգաններին ճշտիվ կատարելու իրենց պարտավորությունները—անտառանյութ, ցեմենտ, յերկաթեղեն, արտ-հագուստ և այլն, մատակարարելու ուղղությամբ։

4. Խնդրել Ժ. Կ. Խ-ին՝ Ղուերի վարչությանը տրամադրել անհրա-

ժեշտ քանակությամբ վագոններ Եջմիածնի հանքերից խիճ և ավազ փոխադրելու համար. իսկ տեղում խիճ պատրաստելու համար՝ 2 հատ քար կոտրող մեքենաներ։

5. Առաջարկել Ղուերի 3-րդ դիստանցիայում կուս., պրոֆ., ԼԿՅԵՄ կազմակերպություններին և վարչությանը՝

ա) 10 որվա ընթացքում ստեղծել բոլոր հարմարությունները (շենք, սեղաններ և այլն) դպրոցների պարապմունքներն սկսելու համար։

բ) Բարակներում և ճաշարաններում բանվորների հանգստի ժամերին կազմակերպել դրույցներ-բարձրաձայն ընթերցումներ, քաղաքական խաղեր, իսկ ակումբում—կինո ցուցադրումներ—ներկայացումներ, ինքնագործունեության յերեկոներ և ընդհանրապես կազմակերպելով բանվորների խելացի հանգիստը. վճռական մասսայական պայքար ծավալել ու հիմնովին արմատախիլ անել թղթախաղը, հարբեցողությունը և նման այլանդակությունները բանվորների միջից։

գ) Ռադիո կենտրոնի հետ միասին բարակներում և ճաշարաններում սարքավորել ռադիո բարձրախոսներ։

դ) Անմիջապես վերանայել պատի լրագրի խմբկոլի կազմը և նրանց մեջ ներգրավել ակտիվ հարվածային ու կայուն ընկերների. ապահովել պատի լրագրի կանոնավոր հրատարակումը և մարտունակությունը, վորպես մասսաների կոլեկտիվ կազմակերպչի և ագիտատորի։

յե) Բոլոր կոմունիստներին և կոմյերիտականներին բարակներում տեղավորել այնպես, վոր յուրաքանչյուր բարակ ապահոված լինի կոմունիստների և կոմյերիտականների անհրաժեշտ կորիզով, վորոնց խիստ պատասխանատու դարձնել բարակներում տարվող քաղաքական մասսայական աշխատանքների համար և վորոնց կազմակերպել, անողոք պայքար ծավալելու դասակարգային թշնամու, դաշնակ-կուլակային տարրերի և նրանց գործակալների դեմ՝ մաքրելով շինարարությունն այդպիսի տարրերից։

Միաժամանակ անխնա պայքար մղել բանվորների մեջ նկատվող ոսկրոդական տրամադրությունների և աշխ. անդիսցիպլինարության դեմ։

զ) Անմիջապես ձեռնարկել կուսակցական ուժերի վերադասավորումն այնպես, վոր արտադրական բոլոր ողակներում կազմակերպվեն կուս. խմբակներ և կուս. մասսայական աշխատանքի ծանրության կենտրոնն իրականում փոխադրվի արտելը, բրիգադը, եքսկավատորը։ Նույն ձևով վերակառուցելով ԼԿՅԵՄ, պրոֆ աշխատանքները, արտադրության բոլոր ստորին ողակներում կազմակերպել ստորին յեռանկյուններ, վորոնց ամբողջապես պատասխանատու դարձնել պլանների կատարման համար։

է) 10 որվա ընթացքում ձեռնարկել կոնկրետ միջոցներ հավաքա-

դըրված բանվորները տեղավորելու և նրանց համար կենցաղային տանելի պայմաններ ստեղծելու ուղղությամբ։

ը) Առանձնահատուկ ուշադրություն ծավալել ընկ. ՍՏԱԼԻՆԻ վեց ցուցմունքների մասսայականացման, նրանց իրական կատարման և այդ կոմունիստներին և կոմյերիտականներին ընդգրկելով հարվածայնության մեջ, աշխարտադրողականությունը ավելի բարձր աստիճանի հասցնել, մաքսիմալ չափերով կրճատել շինարարության ինքնարժեքը, բարելավել աշխատանքի վորակը և լայն չափերով տնտեսել շինանյութերը և բոլոր մատերիալները։ Միջոցներ ձեռք առնել բոլոր ոզակներին անցկացնելու իրական տնտհաշվարկի։

թ) Ձեռք առնել վճռական միջոցառումներ շինարարությունը մաքսիմալ չափերով մեխանիզացիայի յենթարկելու և գոյություն ունեցող մեխանիզացիան, հատկապես եքսկավատորները, լրիվ ոգտագործելու համար;

6. Ղռերի բանկոոպի վարչության՝ 5 որվա ընթացքում մշակել կոնկրետ ձեռնարկումներ՝ ճաշարանի սանիտարական դրության, ճաշի և հացի վորակի լավացման ուղղությամբ և ներկայացնել Ցերկոմին ի հաստատություն։

7. Ղռերի վարչության՝ 10 որվա ընթացքում ձեռք առնել անհրաժեշտ միջոցառումներ, 3-րդ դիստանցիան ինժեներ-տեխնիկական պերսոնալով ապահովելու համար։

8. Կուլտ. պրոպագանդին և կոմբջիջներին՝ տասն որվա ընթացքում կազմակերպել քաղ. դպրոց և բոլոր կոմունիստներին ընդգրկել քաղուսուցման ցանցում։

9. Հանձնարարել կազմ-բաժնին՝ 10 որվա ընթացքում ուղարկել 3-րդ դիստանցիայում աշխատելու մեկ վորակյալ մասսավիկ։

10. Կազմ-բաժնին՝ 10 որով մեկ կազմ-խմբակ ուղարկել 3-րդ դիստանցիայում աշխատելու և կոմբջիջին ոգնելու կուլտ. մասսայական աշխատանքները վերակառուցելու համար։

ՀԿ(Բ)Կ ՅԵՐՔԱՂԿՈՄԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ՝ ՂՌԵՐԻ 1 ՅԵՎ 2 ԴԻՍՏԱՆՑԻԱՅԻ ԿՈՒԼՏ. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համարել միանգամայն անբավարար կուլտ. քաղաքական մասսայական աշխատանքները Ղռերի 1 և 2 դիստանցիաներում։ Արձանագրել, վոր Ղռերի վարչությունը թերագնահատել է կուլտ. քաղաքական մասսայական աշխատանքները և ցուցաբերել է անթույլատրելի և դատապարտելի վերաբերմունք հանդեպ այն. Ցերկոմի բյուրոն վորոշում

է առաջարկել Ղռերի յերանկյունուն և կառուցողների կենտվարչությանը՝

1. 5-որվա ընթացքում 1 և 2 դիստանցիաներում կազմակերպել մեկական կարմիր անկյուն— ակումբ, կահավորելով վերջիններս համապատասխան ինվենտարով և արտաքին ձևավորումով— (լոզունգներ, պլակատներ, նկարներ և այլն)։

Մշակել կարմիր անկյան, ակումբի աշխատանքների կոնկրետ ոպերատիվ ծրագիր— խնդիր դնելով ծավալել բովանդակալից, հետաքրքիր, լայն կուլտ-մասսայական աշխատանքներ, դիտելով այն վորպես պլանների կատարման կարևոր լծակներից մեկը։

2. Յերեք որվա ընթացքում յեղած մեկ մասսավիկին ավելացնել ևս յերեք մասսավիկ, կուլտուրնիկ, վորոնցից յերկուսին հատուկ առանձնացնել ազգային փոքրամասնությունների մեջ աշխատանքներ տանելու համար։

3. Մի դեկադում Լուս-բաժնի հետ միասին կազմակերպել լիկկայաններ այն հաշվով, վոր առաջին հերթին ընդգրկվեն բոլոր անգրագետ և ապա կիսագրագետ բանվորները լիկկայաններում։

4. Սիստեմատիկաբար կազմակերպել զրույցներ, դասախոսություններ, զեկուցումներ արտադրության այրող հարցերի և ակտուալ տնտեսական քաղաքական խնդիրների շուրջը։

5. Հրատարակել պատի թերթեր՝ ընդունելով դիստանցիայի առանձին բրիգադների ամենորյա պատի թերթերի հրատարակման սիստեմը։ «ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՈՂ» թերթին՝ ոժանդակել և ղեկավարել այդ գործը։

6. Ավելացնել ստացվող թերթերի անունները (նազվանիա) և քանակը, ինչպես նաև հանդեսներինը, խնդիր դնելով թերթերի քանակը հասցնել 10 բանվորին մեկ հատ թերթ. կազմակերպել ստացվող թերթերի և հանդեսների լայն ոգտագործում— ընթերցումը, ինչպես նաև խմբակային բարձր ընթերցումը։

7. Կազմակերպել առնվազն 5-որյակում մեկ անգամ կինոյի ցուցադրում. կատարելով ցուցադրվող կինո-նկարների հատուկ ընտրություն՝ թեմայի և իդեոլոգիական կայունության տեսակետից։ Հանձնարարել Հայկինոյին՝ ոժանդակել և աջակցություն ցույց տալ այդ գործում Ղռերի վարչությանը։

8. ՀԱՄԽ-ի կուլտ. սեկտորին՝ կազմակերպել բանթատրոն, բանթատրոնի բրիգադի համախակի յելույթներ Ղռերի 1 և 2 դիստանցիաներում։

9. Տաս որվա ընթացքում կազմակերպել մանկ- հրապարակներ այն հաշվով, վոր լրիվ կերպով ընդգրկված լինեն բանվորների համապատասխան հասակի յերեխաները մանկապարտեզներում։ Հանձնարարել

Ցերկոմի կին-սեկտորին՝ հատուկ հսկողության տակ առնել սույն կետի վորոշումը։

10. Առաջարկել Ռադիո-կենտրոնին՝ յերկու սրվա ընթացքում անցկացնել ռադիո ցանց։

11. Առաջարկել «ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՈՂԻ» խմբագրությանը՝ հրատարակել դիրեկտիվ մարմինների Ղռերին վերաբերող վորոշումների հատուկ բրոշյուրա-լիստովկա և մասսայականացնել այն Հայկոմկուսի Կենտկոմի հայտնի վորոշման հիման վրա։

12. Հանձնարարել Ցերկոմի կուլտ. պրոպագանդիներին՝ ուղարկել շինարարության վրա կազմ-պրոպ դրուպպաներ (3—5 հոգուց բաղկացած) կազմակերպելու և ղեկավարելու համար դիստանցիայի կառուցման կուլտուր դաստիարակչական մասսայական աշխատանքները։

13. Առաջարկել Ցերկոմի կուլտպրոպին՝ Ղռերի 1 և 2 դիստանցիայի բանվորության համար կազմակերպել մի շարք դեկուցումներ, դասախոսություններ, ակտուալ տնտեսական քաղաքական խնդիրների վերաբերյալ։

14. Ղռերի յեռանկյունուն և Կառուցողների կենտվարչությանը՝ հատուկ քննության առնել սույն վորոշումը և իրագործելու համար մշակել կոնկրետ որացուցային պլան։

ԱՐԴԿՈՄԲՆԱԿՇԻՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՊՐԻԼԻ 21-Ի ՆԻՍՏԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ՝ ՂՌԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ, ՀԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ՀԱՄԽ-Ի ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Ղռերի վոռոզման աշխատանքներն արագացնելու նպատակով նախագահությունը վորոշում է՝

1. Մորբիլիզացիայի յենթարկել Կենտվարչության ապարատից պատասխանատու ընկերներ և կցել Ղռերի աշխատանքներին մինչև աշխատանքների վերջը, պատասխանատու դարձնել ՄՈՎՍԵՍ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ։

2. Խնդրել ՀԱՄԽ-ին՝ ուրիշ միություններից պրոֆ-աշխատողներ ամրացնել Աղբաշին, Դերակին, Աղհամզալուին և Այրոդրոմին—տեղի կազմակերպություններին ոգնելու համար։

3. Առանձին դիստանցիաներում կցված ընկերների միջոցով հրավիրել լայն բանվորական, ինժ. տեխ. պերսոնալի ժողովներ. քննության առնել Կենտկոմի, ՀԱՄԽ-ի և Կ.Վ. վորոշումները՝ Ղռերի աշխատանքները հուլիսի 20-ին վերջացնելու մասին։

4. Կցված ընկերների միջոցով տեղերում կազմել աշխատանքի կոնկրետ ծրագիր՝ իրենց ամենորյա կատարվող աշխատանքների մասին։ Մինչև ամսույս 25-ը Ղռերի բոլոր աշխատանքներում և առանձին դիստանցիաներում կազմակերպել պրոֆիկազմակերպիչներ կցված ընկերների անմիջական ղեկավարությամբ, նույնը բրիգադներում։ Մասսայականացնել բրիգադների արդիֆինալանները և հասցնել պլանները բրիգադներին, ցեխերին, և անհատ բանվորներին։

5. Հաշվի առնել դեֆիցիտային շինանյութերի պահանջը. ՀԱՄԽ-ի և Ժողկոմխորհի միջոցով չտապեցնել դրանց ստացումը։ Այս աշխատանքները հանձնարարել ընկ. ՄՈՎՍԵՍ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ— ժամկետը մինչև ապրիլի 20-ը։

6. Ղռերի աշխատանքների վոզջ ցանցում ուժեղ բեկում մտցնել սոցմրցման և հարվածայնության մեջ, լայն ծավալելով այդ ուղղությամբ մասսայական աշխատանքները՝ ամբողջ բանվորներին սոցմրցման ու հարվածայնության մեջ ընդգրկելու համար և դրա հետ զուգընթաց, հաշվի առնել լավագույն հարվածայիններին պարգևատրելու նկատառումով։

7. Կցված ընկերների միջոցով հաշվի առնել առաջավոր արհեստների բրիգադներին, այն իմաստով վորպեսզի կազմակերպվեն նորատեսակ անտհաշվարկային բրիգադներ։

8. Հանձնարարել «ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՈՂԻ» խմբագիր ընկ. Սիմոն Նալբանդյանին՝ յերկու համար նվիրել Ղռերի աշխատանքների ընթացքին սույն վորոշման կատարման ուղղությամբ։

9. Հանձնարարել Կենտվարչության կուլտ. սեկտորին՝ մինչև մայիսի 5-ը հաշվի առնել Ղռերում բոլոր անդրադետ-կիսադրադետ բանվորներին, այն իմաստով, վորպեսզի բոլոր կիսադրադետներն ու անդրադետներն ընդգրկվեն լիկբեզներում։

10. ՀԱՄԽ-ի միջոցով առաջարկել Հայկինոյին, վորպեսզի Ղռերի ամբողջ ցանցը սիստեմատիկ ապահովված լինի շրջիկ կինոներով։

11. Առաջարկել Ղռերի բանկոմին՝ միջոցներ ձեռք առնել կանոնավորելու Ղռերի կոոպերատիվ սպասարկումը արդյունաբերական ապրանքներով։ Ճաշերի վորակը վճռապես բարելավել, միաժամանակ առաջարկել բանկոմներին՝ ուժեղացնելու հասարակական կոնտրոլն այդ ուղղությամբ։

12. Խնդրել Կոոպտ. և հասարակական Սնունդի միությունների կ. վարչությանը, Ղռերի ցանցում ունենալ հատուկ ներկայացուցիչներ՝ կոոպ. և ճաշարանների սպասարկումը ղեկավարելու և հսկելու համար։

13. Ուժեղ բացատրական աշխատանք տանել նորեկ բանվորների մեջ ընկ. Ստալինի վեց պատմական ցուցումների ուղղությամբ և ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ նրանց կենսագործման համար։

14. Առաջարկել կենտվարչության աշխատավարձի սեկտորին՝ լայն բացատրական աշխատանքներ ծավալել նոր հավաքական պայմանագրի ուղղությամբ, միաժամանակ նախապատրաստել և անցկացնել նոր տարիֆային ցանցը։ Ժամկետ մինչև մայիսի 10-ը։

15. Գտնել անհրաժեշտ՝ Կենտվարչության նախագահության մայիսի 13-ի նիստը հրավիրել Այրոդրոմում և լսել աշխ. ղեկավարի և Մովսես Ղարիբյանի զեկուցումները։

ԱՐԴԿՈՄԲՆԱԿՇԻՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ ՂՌԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կ. վարչության նախագահությունը, լսելով կենտվարչության կողմից Ղռերի կառուցման աշխատանքներին օժանդակելու համար կցված ընկ. Մ. Ղարիբյանի զեկուցումն ու ընկ. ընկ. Հ. Հովհաննիսյանի, կուլտ. սեկտորի վարիչ Վ. Աբովյանի, «Հարվածային կառուցող» թերթի խմբագիր ընկ. Ս. Նալբանդյանի և Ղռերի 3-րդ դիստանցիայի բանկոմի նախագահ Պողոս Հալաջյանի հարակից զեկուցումները Ղռերի վառոդման շինարարության ընթացքի մասին՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Կենտվարչության նախագահության վորոշումների կիրառման ուղղությամբ ու բանվորության մեջ տարվելիք կուլտ-մասսայական աշխատանքների մասին, արձանագրում է. ՀԿ(բ)Կ Կենտկոմի, ՀԱՄԽ-ի, Կ. վարչության վորոշումներից ու կոնկրետ միջոցառումներից հետո շինարարության աշխատանքներում պլանների կատարման, բանմատակարարման ու կուլտ. մասսայական աշխատանքների սպասարկման գործում նկատվում է խոշոր բեկում, տեղային բանկոմ-խմբկոմների ձեռք առած միջոցների, նրանց աշխատանքների վերակառուցման շնորհիվ, բանվորների ու ինժեներ-տեխնիկական պերսոնալի մեջ նկատվում է մեծ խանդավառություն ու ենտուզիազմ պլանների կատարման գործում: Սակայն, այս նվաճումների հետ միասին, նախագահությունը նշում է, վոր Ղռերի աշխատանքների մեջ դեռևս կան աչքի ընկնող բացեր, գլխավորապես կուլտ-մասսայական աշխատանքների, սպասարկման և պլանները ցեխ, բրիգադ ու անհատ բանվորներին հասցնելու տալաբիգում, վոր դեռ մեր մի շարք բանկոմներ (Աղհամզալուի բանկոմը) իրենց աշխատանքները հիմնովին չեն վերակառուցել և աշխատանքի ծանրությունը ցեխ, բրիգադ, խմբակ չեն փոխադրել:

Դեռ չեն ստեղծվել համապատասխան քանակությամբ ակտիվ ու կամավոր հրահանգիչներ, վորոնց միջոցով հնարավոր լիներ ծավալել կուլտ. քաղ-մասսայական աշխատանքները, չեն վերակառուցվել կուլտ խորհրդի աշխատանքները, կանոնավոր հիմքերի վրա չեն դրված կարմիր անկյան աշխատանքները, հանրակացարանում աշխատանքների ընդմիջումների ժամանակ չեն կազմակերպվում զրույցներ, բարձրաձայն ընթերցանություններ, դասախոսություններ և այլն:

Ցեղած կարմիր անկյունը (Աղհամզալու) տեղի տնտեսվար ընկ. Վահրամը, վորը միևնույն ժամանակ հանդիսանում է կոմբինեի քարտուղար, դարձրել է հանրակացարան, կուլտ. աշխատանքները համարելով յերկրորդական, այնինչ միանգամայն հնարավոր է այդ բանվորներին տեղավորել ուրիշ տեղ:

Ելնելով այս բոլորից, Կ. վարչությունը գտնում է անհրաժեշտ՝

1. *Կ. վարչության կողմից կցված ընկերներին թողնել մինչև աշխատանքի վերջը, Աղհամզալուին ամրացնել ընկ. Հայկ Փանֆանյանին. տեղի աշխատանքներին օժանդակելու համար:*

2. *Առաջարկել կուլտ. սեկտորի վարիչ ընկ. Վոսկի Աբովյանին՝ իրեն անձնական պատասխանատվությամբ 5 որվա ընթացքում կարգի բերել Աղհամզալուի կարմիր անկյունը, կանոնավորել ռադիոն, դուրս գրել համապատասխան թերթեր, ամսագրեր և այլն:*

3. *«Հարվածային կառուցող» թերթի խմբագիր ընկ. Նալբանդյանի անձնական պատասխանատվությամբ բանվորական բրիգադների միջոցով ամենօրյա հսկողություն ունենալ Ղռերի շինարարության աշխատանքների վրա և թերթում տալ հատուկ տեղ շինարարության աշխատանքների, ինչպես նվաճումների, այնպես էլ թերությունների մասին: Մինչև ամսույս 9-ը հատուկ բրոշյուրով հրատարակել Ղռերի աշխատանքների մասին յեղած ՀԿ(բ)ԿԿ Կենտկոմի, Յերքաղկոմի, ՀԱՄԽ-ի և Կ. վարչության վորոշումները, այդպիսին տարածել Ղռերի կառուցողների մեջ:*

4. *Կ. վարչությունը արձանագրում է, վոր մյուս միությունների կենտվարչության կողմից մոբիլիզացիայի յենթարկված ընկերները, ինչպիսին են Կոոպառից՝ ընկ. Ալեքսանը, Բժ. սանից՝ ընկ. Խաչիկ Սահակյանը, Մս. ձուկից՝ ընկ. Ժենյա Խոնդկարյանը, մինչև օրս կանոնավոր չեն յեղել աշխատանքների վրա և յեղած ժամանակ անբավարար աշխատանք են կատարել, օրինակ՝ կոոպառից ընկ. Ալեքսանը մի շաբաթ նստել է Աղհամզալվում և գործնական վոչ մի աջակցության ու օժանդակություն ցույց չի տվել տեղի ընկերներին: Լուսաշխի միությունը շատ ճոճուն վորոշում է հանել և ամբողջ կուլտ. աշխատանքները վերցրել է իր վրա, բայց մինչև հիմա վոչ մի գործնական աշխատանք չի կատարել. այդ իսկ տեսակետից էլ խնդրել ՀԱՄԽ-ին՝ վերոհիշյալ մի շարք կենտվարչությունների նկատմամբ ձեռք առնել համապատասխան միջոցներ:*

5. *Հանձնարարել ընկ. ՂԱՐԻԲՅԱՆԻՆ՝ մինչև 9-ը հրավիրել մոբիլիզացիայի յենթարկված ընկերների, տեղի բանկոմի նախագահների և աշխղեկների միացյալ խորհրդակցություն, նրանց մեջ կատարել աշխատանքի բաժանում, յուրաքանչյուրին հանձնարարելով աշխատանքների վորևէ մի բնագավառ:*

6. *Հանձնարարել կցված ընկերներին՝ տեղի բանկոմ-խմբկոմների հետ միասին պրոֆաշխատանքները հիմնովին վերակառուցել բոլոր բրիգադներում, ցեխերում կազմակերպել յեռանկյուններ, պլանները հասցնել նրանց և պատասխանատու դարձնել նրանց իրենց պլանների կատարման համար, 5 օրը մեկ անգամ բրիգադներին տեղյակ պահել իրենց պլանների կատարման ընթացքի մասին:*

7. *Բանկոմներին՝ հետևել, վորպեսզի բոլոր*

ՀՀ Ազգային գրադարան
NL0977029

11
26558

ները մինչև աշխատանքի անցնելը իրենց ձեռքում ունե
(պատվերը), իրենց աշխատանքի պլանը պարզ ցույց տ
տրժեքը, նորման և այլն, միևնույն ժամանակ հետևել աշխատանքի
ճիշտ չափման ու աշխատավարձը ժամանակին բաշխելու գործին։

8. Նշել, վոր սոցմրցման և հարվածայնության ծավալման, նամա-
նավանդ հաշվառման գործը, դեռևս իր բարձրության վրա չի գրված.
առաջարկել կցված ընկերներին, բանկոմ-խմբկոմներին՝ ծավալել սոց-
մրցումն ու հարվածայնությունը, սոցմրցման հանել կոլեկտիվը կոլեկ-
տիվի դեմ, ցեխը՝ ցեխի, արտելը արտելի դեմ, միևնույն ժամանակ,
հետևել նրա արդյունքների հաշվառման և լավագույն հարվածայիննե-
րին պարգևատրելու գործին։

9. Բանվորության մեջ դեռևս նկատվում է հոսունություն, վորը
հեռանք է մասսայական բացատրական աշխատանքների բացակայու-
թյան. առաջարկել բոլոր ընկերներին՝ տանել բացատրական աշխատանք
բանվորների մեջ, մինչև աշխատանքների վերջը ինքնամրցնելու հա-
մար, հետևել, վոր խոշոր տարբերություններ դրվեն հարվածային
ինքնամրցման յենթարկված բանվորների և վոչ ինքնամրցման յեն-
թարկված բանվորների մեջ, արդյունաբերական ապրանքները բաշխե-
լիս։

10. Բանկոմ-խմբկոմներին՝ ունենալ ամենօրյա հսկողություն բան-
մատակարարման, ճաշերի վորակական ու քանակական ցուցանիշների
կանոնավորման վրա։

11. Աշխատավարձի սեկտորին՝ կարճ ժամանակամիջոցում տնդ
կացնել նոր վնասուցակներ և նոր տարիֆ-տեղեկատուներ, ուժեղացնել
իր հսկողությունը և կոնկրետ միջոցներ ձեռք առնել աշխատավարձի
«ձախ» հավասարեցման փաստերը վերացնելու համար, վորը խոշոր
չափով աչքի յե ընկնում։

12. Աղհամզալվի աշխեղեկի կողմից կարմիր անկյունը հանրակա-
ցարան դարձնելը գտնել միանգամայն անթույլատրելի և առաջարկել
մինչև ամսույս 9-ը ազատել կարմիր անկյունը և նրա հարցը հանձնել
Բանդյուղտեսչությանը։

13. № 45-րդ բանկոմի լավ աշխատանքների համար նրա նախա-
գահ ընկ. Պողոս Հալաջյանին պարգևատրել 50 ռուբլիով և հանել կար-
միր տախտակի։